29 հուլիսի 2016 թվականի N 797 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 82-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի N 48 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 42-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների և կանխիկ ձևով կատարվող ծախսերի չափաքանակները հաստատելու մասին» N 82-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերով.

2) 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին» բառերով.

3) որոշման N 1 հավելվածի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մասով՝ չափաքանակի աղյուսակը և N 2 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 4-ի N 82 - Ա որոշման

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | | | | | | |
| *01* | *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | | | | | |
| | *01* | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | | | |
| | | *02* | *Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ* | | | |
| | | | *10* | *Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ* | | |
| | | | | | Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 50,000.0 |
| | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | 50,000.0 |

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 4-ի N 82 - Ա որոշման

 Չ Ա Փ Ա Ք Ա Ն Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՀՍԿԻՉ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԻԿ ՁԵՎՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ

| Նախարարությունը, գերատեսչությունը | Բաժինը | Խումբը | Դասը | Ծրագրի համարը | | Կանխիկ ձևով կատարվող ծախսերը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | | | | | | |
| *01* | *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | | | | | |
| | *01* | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | | | |
| | | *02* | *Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ* | | | |
| | | | *10* | *Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ* | | |
| | | | | | Հատուկ նպատակային այլ նյութեր | 40,000.0 |
| | | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **40,000.0** |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. օգոստոսի
Երևան